ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆՀՄԱԾՁԲ-22/1 ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգով սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.05.2022թ. ժամը 10:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

03.05.2022թ

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Բաղումյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Սերգեյ Աբրահամյան /գնահատող/

Սուրեն Պռազյան /գնահատող/

Սվետլանա Գրիգորյան /բացող/

Արթուր Սեդրակյան/բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բաղդալյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 ՀՀԿԳՄՍՆՀՄԱԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

**2.1** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆՀՄԱԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «Գլոբալ Սուփորթ» ՍՊԸ | globalsup@bk.ru |
| 2 | «ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | vsgrouparmenia@gmail.com |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

**3.1** Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չափա-բաժին | Նախահաշ-վային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «Գլոբալ Սուփորթ» ՍՊԸ | | «ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | | | |
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 24361500 | 23890000 | 23890000 | 24300000 | 24300000 |

**6. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

**6.1 «Գլոբալ Սուփորթ» ՍՊԸ-ի** կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**6.2 «ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի** կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված 1.2) հայտարարագիրը ներկայացնող անձի տվյալները և հայտարարագրի էջերի քանակը սխալ է լրացված, ինչպես նաև բացակայում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.**

**7.1** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի** –ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**7.2** Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2022թ մայիսի 5-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 05.05.2021թ. ժամը 11:00-ին**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Բաղումյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Սերգեյ Աբրահամյան /գնահատող/

Սուրեն Պռազյան /գնահատող/

Սվետլանա Գրիգորյան /բացող/

Արթուր Սեդրակյան/բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բադալյան

**8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

**8.**1 **«ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**9. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

**9.1** Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել **«Գլոբալ Սուփորթ» ՍՊԸ** -ին,

2-րդ տեղ զբաղեցնող՝ **«ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ** -ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**10. Գնահատման արդյունքների մասին.**

**10.1** Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

------------------------------ Դավիթ Բաղումյան /նախագահ/

------------------------------ Սերգեյ Աբրահամյան

------------------------------ Սուրեն Պողոսյան

------------------------------Սվետլանա Գրիգորյան

------------------------------Արթուր Սեդրակյան/բացող

------------------------------ Կարինե Բադալյան /քարտուղար/